ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— փետրվարի 2024 թվականի №—-Ա

«Դ ԷՆԴ Ա ՓԱՐԹՆԵՐՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Դ ԷՆԴ Ա ՓԱՐԹՆԵՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի հունվարի 18-ի և 22-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության մասնակից Արամ Քոքոբելյանին պատկանող՝ 100 տոկոս բաժնեմասը Դավիթ Քոքոբելյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքի կնքմանը՝ ներկայացնելով 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ Արամ Քոքոբելյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի Դավիթ Քոքոբելյանին նվիրատվությամբ հանձնման պայմանագրի պատճենը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 25-ի № ԳԲ/34.2-Մ2-8/327-2024 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը նույն թվականի փետրվարի 19-ի №01/11.1/1590-2024 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից առանց Հանձնաժողովի համաձայնության կատարված Ընկերության մասնակցի փոփոխության հայտի (այսուհետ՝ Հայտ) վերաբերյալ առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով նաև Հայտի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենալու մասին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են: Պարզվել է նաև, որ Արամ Քոքոբելյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Դավիթ Քոքոբելյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքը Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել է 2023 թվականի դեկտեմբերի 7-ին՝ Օրենքի 14-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված՝ օրենքի ուժով այն առ ոչինչ է: Միաժամանակ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումը՝ 2024 թվականի հունվարի 18-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացնելով համապատասխան հայտը և բաժնեմասի նվիրատվության պայմանագիրը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Արամ Քոքոբելյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Դավիթ Քոքոբելյանին նվիրատվությամբ փոխանցելու գործարքի կնքմանը,
2. Ընդունել ի գիտություն, որ 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ Արամ Քոքոբելյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Դավիթ Քոքոբելյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքը կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ է:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2024 թ.